

Ս Ի Ռ Ա

Ա Մ Ս Ա Կ Ի Ր

ԿՐՈՆԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԱԽԱՂԻՄԻ Հ.Օ. ՊԱՅՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ



ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՑԱԿՈԲԵԱՆՑ
ԵՐԱԽԱՂԻՄԻ

Ս Պ Ո Ւ

Ժ Գ. Տ Ա Ր Ի — Ն Ո Ր Շ Բ Զ Ա Ն

1939

♦ Յ Ա Խ Լ Ի Ս ♦

Թ Ի Ւ 7

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Ա. Լուսաւորչի նույրուած գոյզ տօները, կաթողիկէ Ա. Էջմիածնի հաստատութեան, ինչպէս նաև Մեծն ներսէսի և Սահակ-Մեսրոպի յիշատակին նույրուած տօնախմբութիւնները, զորս յալորդաբար կատարեցինք անցնող ամսուանընթացքինք կը յիշեցնեն Հայաստանեաց Եկեղեցւոյ կազմաւորման և հետպհետէ իր ուրոյն նկարագիրը ստանալու իրողութիւնը, որ այնչափ կարեռ է մեզի համար թէ՝ կրօնական և թէ՝ ազգային տեսակէտներէ միանդամայն:

Քրիստոնէութիւնը, որ գերազանցապէս հոգեկան արժէքներու և յաւիտենական սկզբունքներու կրօնքն է, նուազագոյն ծէսերով և ամենէն պարզ ձեւերով կը ներկայանար զանազան ժողովուրդներուն և ազգերուն, և անոնցմէ իւրաքանչիւրը անոր ոզին իւրացնելով՝ իրեն յատուկ եղանակով պիտի արաւյայտէր զայն միշտ պահելով այն անհրաժեշտ ծէսերն ու ձեւերը, որոնք այդ ոզին հետ կուզային, և կոյուած էն հարազատօրէն ներկայացնել զայն որ քրիստոնէական կրօնի իսկութիւնն ու ամբողջ մարդկութեան եղբայրութեան և միութեան հիմք պիտի կազմէր:

Որչափ ատեն որ քրիստոնէութիւնը մնաց սահմանափակ շրջանակի մը մէջ, անոր արտայայտութեան միջոցները, այսինքն ծէսերն ու ձեւերն ալ մնացին իրենց պարզութեան մէջ, սակայն անոր ծաւալման հետ հետզհետէ բազմացան և ընդլայնեցան իր արտայայտութեան եղանակներն ալ: Արտայայտութեան այս զանազանութիւնը աւելի որոշ կերպով երեան եկաւ արևելքի ժողովուրդներուն մէջ, որոնք աւելի խորհրդապաշտ քան արևմտեանները՝ թոփչք տուին իրենց մտածումին և զգացումներուն՝ արտայայտութեան նոր և ճոփ ձեւեր սուեղծելով: Այս գրութեան զարգացումով քրիստոնէական եկեղեցւոյ մէջ յառաջ եկան արտայայտութեան որոշ տարբերութիւններ և իւրաքանչիւր ազգ իրեն արտայայտութեան ձեխն համաձայն ունեցաւ իր եկեղեցին. այսինքն ոզիով և աւանդութիւններով նոյն մնալով հանդերձ Մայր Բունի՞ Ըսդհանրական Եկեղեցւոյ հետ երկրորդական էկտերու մէջ այլազանութիւն գրաւ, այլ խօսքով ինչ որ աստուածային յայտնութիւն էր պահեց իր հարազատութիւնը, և ինչ որ մարդոց կողմէ պիտի աւելնար անոր վրայ՝ այլազան ձեւերով ներկայացաւ:

Հայաստանեայց Եկեղեցին ալ այս եղանակով կազմուած Եկեղեցիներու կարգէն էր, որ սկսաւ քրիստոնէութեան տարածման առաջին իսկ շրջանին մեր Տիրոջ երկու առաքեալներով, որոնք մեզի բերին քրիստոնէական կրօնքը իր ամենէն պարզ ձևին մէջ : Մինչև Ս. Լուսաւորիչ տակաւին ազգային նկարագիր մը չէր առած ան, վասնզի այդ շրջանը առաւելաբար քարոզչական և տարածման շրջան մըն էր : Ս. Լուսաւորիչով էր որ քրիստոնէութիւնը մեր մէջ գէպի ազգայնացում առաջին քայլը առաւ, վասնզի առաջին անդամ էր որ Հայը հաւաքաբար կը տողարուէր և իբրարու կը գողուէր միենայն ոգիով և սկզբունքներով : Ազգին ամբողջ զաւակներուն միենայն զաղափարականին և ուղղութեան հետեւ լու այս ողին ճամբան պիտի բանար ինքզինքը արտայայտելու, նոր միջոցներ ստեղծելու . Եւ ասոր առաջին փորձը, որ սկզբնաւորութիւն մը կարելի է համարել, կատարուեցաւ ձեռամբ Ս. Լուսաւորչի, որուն Եկեղեցական, կազմակերպչական և այլ ձեռնարկներուն չնորիիւ քրիստոնէութիւնը ազգային ինքնուրոյն գրոշմ ստացաւ մեր մէջ : Եւ եթէ ուղղակի Ս. Լուսաւորչին հաստատուած առաջին Եկեղեցիներու — Տարօնի Ս. Կարապետ, Ս. Էջմիածին, Ս. Հոփիսիմեանց, Ս. Գալիանեանց Եւ այլ տաճարներու — Ներկայ ձեւերը նկատենք, եթէ ոչ բոլորովին նոյն՝ գէթ նմանութիւնը կամ ճարտարապետականօրէն աւելի ծաղկեալ ձեւերը առաջին շինութիւններուն, կարելի է անվարան ըսել թէ հայը ոչ միայն իր Եկեղեցական կազմակերպութեանց, նուիրապետական և այլ վարչական կանոնադրութեանց և ծխական արարողութեանց մէջ, այլ նաև արուեստի մարգին մէջ ալ առաջին իսկ օրէն բերած է իր բաժինը՝ արտայայտելու զգալի ձեւերու տակ, իր ուրոյն ոճով, այն անտեսանելի ողին որ կուզար իրեն քրիստոնէական կրօնի խողովակով : Ու այս կերպերու մէջ հայը իր տուրքը կուտար քրիստոնէութեան, իրեն յատուկ արտայայտութեամբ մը :

Լուսաւորիչին ետք Մեծն Ներսէսի գործը նոր կանոնադրութիւններով, հեթանոսական յոտի սովորութեանց բարձումով, և բարեխրական հաստատութեանց հիմնումով, աւելի քրիստոնէացուց հայութիւնը Եւ հայեցի նկարագրով մը օժտեց զայն : Ազգայնացման տեսակէտով միակ առաւելութիւնը թերեւ Ս. Գրքի հայերէն բերանացի թարգմանութիւններն եղան, որոնք գետին պատրաստեցին հայ մշակոյթի ստեղծագործման, և աւելի արագ և հաստատուն կերպով տարածման :

Սահակ-Մեսրոպեան շարժումն էր որ իսկապէս քրիստոնէութիւնը ազգայնացուց և հայ ժողովուրդի ճակատազիրը վերջնականապէս կապեց քրիստոնէական կրօնքին և սկզբունքներուն : Եւ հայուն միտքը միացած քրիստոնէական աստուածային ողիին հետ, ինքինքը արտայայտեց աշխարհին մէջ քիչ անդամ պատահած հրաշալի երեյթով մը, որ հայ զիրի և մշակոյթի ստեղծումն էր : Ասով հայը նոյնացաւ քրիստոնէութեան հետ անոր մէջ գտնելով այնպիսի հոգեկան զօրութիւն մը, որ զերազանց էր պետական և ֆիզիքական ամէն ուժէ, որ դարերու ընթացքին իր գոյութիւնը ապահովելէ զատ զինքը քաղաքական ամէն ուժէ, որ դարերու ազնուացներու առաւելութիւնն ալ ունէր :

Սահակ-Մեսրոպ վերջին գրոշմը տուին մեր Եկեղեցւայն, ու անիկա եղաւ

մեր ազգային Եկեղեցին, այսինքն հայ ազգը իր կեանքով, իր համոզումներով և իր ձկոտութերով այլևս նոյնացաւ իր Եկեղեցին հետ. ինչ որ եղաւ Սահակ-Մեսրոպէն յետոյ, միայն նոյն ուղղութեան և ողին զարգացումն էր. այդ թուականէն մինչև մեր օրերը, տասներին դարեր շարունակ, հայը իր միտքը, իր արուեստը, իր նիրթական ճոխութիւնն ու փառքը, ինչ որ ունէր լաւագոյն, միշտ իր Եկեղեցին մէջը դրաւ, և անոր միջոցաւ արտայայտեց ինքզինքը: Եւ ատոր համար Հայ Եկեղեցին եղաւ հայ հանճարին և ողին հարազատ ցոլացումը: Եւ Լուսաւորիչ, Մեծն Ներսէս և Սահակ-Մեսրոպ ինչպէս նաև ասոնց բոլոր յաջորդները մինչև Խրիմեան և Դուրեան Եկեղեցւոյ նուիրեալ հայրապետներ և սուրբեր ըլլալով հանդերձ մասցին միշտ անկեղծ հայեր և ճշմարիտ ազգասէրներ:

Թէեւ այսպէս կազմուած ազգային Եկեղեցիները իրենց ձևերով իրենք իրենց մէջ ամփոփուած ըլլալու երկոյթը ունին, սակայն քրիստոնէական էական վարդապետութիւններով և աւանդութեամբ կապուած են Ընդհանրական Եկեղեցին: Ազգային ծէսերն ու պաշտամունքը չեն կրցած զայն բաժնել անկէ:

Քրիստոնէութիւնը մինչ ծէսերու և արտայայտութեան այլազնութեանց հանդուրժող էր և նոյն իսկ քաջալերող, ընդհակառակն ողիի և աւանդութեան փոփոխութեան տեսակէսին դէմ չափազանց խիստ և աններող էր, իր մարմինէն զանոնք կտրելու և նետելու աստիճան. այսպէս որ, քրիստոնէութիւնը առաջին օրէն իսկ հաշտ աշքով նայեցաւ քրիստոնէական ողին ազգային նկարազրով արտայայտելու այդ կերպին, և զայն ունե ձևով հակասական չնկատեց իր տիեզերական հանգամանքին, վասնզի ազգութիւնն ալ ընտանիքին պէս քրիստոնէական համամարդկային սկզբունքներու իրականացման մէկ միջոցը կը նկատէր, որ օդակի մը պէս ազգերը իրար պիտի կապէր. ատոր համար ալ ինչպէս անհատականութեան նոյնպէսաւ ընտանիքին և ազգին անհրաժեշտութիւնը նուիրագործեց:

Քրիստոնէական ողին կ'ինչնէ անհատին, կը ծաղկի ընտանիքին մէջ; կը արածուի, կը պարտատրուի և կ'արդիւնաւորուի ազգին միջոցաւ, դառնալով անոր գործունէութեան իրեւ ուղեցոյց, ի մի ճռւելով կրօնական և ազգային խտէալները, Այսպէս ազգը, անհատին և ընտանիքին հետ, դիխաւոր միջոցներէն մէկը կը հանդիսանայ Աստուծոյ թագաւորութեան երկրի վրայ հաստատուելուն. և ինչպէս ընտանիքին նոյնպէս ալ ազգին դէմ դաւաճանելը քրիստոնէական սկզբունքներուն դէմ դաւաճանութեան հաւասար է:

Այս ըմբռնումով է որ մեր երանելի հայրապետները այնչափ նուիրումով աշխատեցան, ստեղծեցին և կազմակերպեցին մեր Ազգային Եկեղեցին, և իրեւ սրբազն աւանդ յանձնեցին մեզի:

Պահենք այդ աւանդը և հաւատարիմ մնանք այդ սկզբունքներուն:

ԽՄԲ.

ԿՐԹՈՒԱԿԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑ 8 Ի^(*)

Եկայիք Ժիմենցար տուր զիօրանն
լրաց, հանգի ի սմա ծագեաց մեզ
լրա ի Հայաստան աշխարհի:

ԵԱՐԱԿԱՆ

Երէկ Հայաստանեայց Եկեղեցին տօնեց
իր հայատոյ հօր՝ Լուսաւորչի տօնը, այսօր
կը տօնենք Ս. Էջմիածնի՝ այսինքն Հայ
Եկեղեցոյ հիմնարկութեան տօնը, Երէկ
գործիչն, այսօր գործին տօնը: Եւ այս
երկու տօները այնքան սերտօրէն առըն-
չաւած են իրառու, որ կարելի չէ զանոնք
անջատ ըմբռանել:

Հայ Եկեղեցին տարուան մէջ երեք ան-
դամենք կը պանծացնէ միշտակը իր ար-
թուն հովուապեաին. մին ՇՊուտն ի վիրա-
պի առիթով, երկրորդ՝ ևելն ի վիրապէնս,
և երրորդը Վիւտ Նշխարացն առթիւ: Յի-
շտակի այս երեք տօները, որ լուսաւորչի
կեանքին երեք գլխաւոր հանգրուանները
կը կազմեն, կը խորհրդանշեն նոյն ատեն
կեանքն ու ելեւէջները այն զաղափարին,
որ Լուսաւորչին եղաւ նախ, ապա հայաս-
տանեայց մարտիրու եկեղեցին: Եթէ ու-
ղենք կեանքի և զաղափարի այդ հոլովոյթը
բացատրել իր ուրիշ և պատմական խոր-
հուրդով, պիտի կրնանք ըսել թէ, ՇՊուտն
ի վիրապօք առերեւոյթ պարտութիւնն է
այն զաղափարին, որուն տաճարակիրը ե-
ղաւ Լուսաւորիչ, տակաւին չկոփած հայրե-
նի հողը: Հայաստան թէ եւ տարիներ առաջ
այցուած էր արդէն քրիստոնէական լոյսէն,
բայց անզգալի մասցած էր լոյսը, զրուած
ըլլալով հայ հեթանոսութեան գրուանին
ներքե, ու չէր կրցած փարատել այն թանձը
խաւարը որ Արքելքին յատուկ է: Լուսա-
ւորիչը զինուեցաւ այդ խաւարին դէմ, և
քաւելու համար իր սուրբ ոճիրը, նետուեցաւ
Արտաշատի զնտան: Մակայն գաղափարը
չի մեռնիր, լոյսը չի թաղուիր, որքան ալ
զօրաւոր և բազմաթիւ ըլլան անոր գերեզ-

մանափրները, և երագուտն՝ անոր գագա-
ղակիրները: «Ելն ի վիրապէն» յաղթանակն
է Լուսաւորչի գաղափարին և քրիստոնէա-
կան լոյսին. ինչ փոյթ թէ հոս, ինչպէս
այլուր, հրաշքը միշտամէտ, իր սուուերը
խաղնելով պատմութեան հորիզոնին վրայ.
իրուութիւնը որոշ է, հեթանոս հայը կը
պարտուի քրիստոնեայ հայէն. լոյսը կը
պատառ կնքուած քոլը խաւարին, որ տա-
րիներով օրօրած ու քնացուցած էր հայ
հոգին:

Իսկ այրին՝ որ այս պատմէկերին դրան
առջեւ կը կենայ, այնքան յանկուցիլ եւ
սրտառուչ, կը խորհրդանչէ արթուն խիզնը
հայուն, և խորհուրդը զոհողութեան: Ո՞հ,
այդ այրիին պատկերը մեզ կ'առաջնորդէ
աւետարանի այրիին, որ գրիութեան գան-
ձանակին մէջ զրաւ իր լուման, ինչպէս՝
հայ այրին հայ գրիութեան գանձանակի՝
խորվիրապին մէջ պիտի նետէր իր նկանակը:
Աւետարանը իր այրին ունի, ինչպէս մեր
պատմութիւնը իր այրին, երկուցն ալ ան-
մահացած են իրենց նույրական կեցուած-
քով և քսյրացած, ինչպէս հայ հոգին եղ-
բայրացած է քրիստոնէական ոգիին հետ,
և արգիւնագործ հայ քրիստոնեան: Բայց
հոս չի վերջանար սրտագրաւ խորհուրդը
այդ զոհողութեան. այս երկու այրիներուն
քով կայ նաև ուրիշ մը, անիկա հայու-
թիւնն է ինքնին: Աւետարանի գանձանա-
կի առջեւն անցան շատ ազգեր, և պատ-
մութիւնը կրնայ վկայել թէ իրավանչիւրը
ինչ է ձգած հոն. անցած է նաև հայը ու
հոն գրած իր ամրողջ ունեցածը: Տուինք
մեր արեան վերջին կաթիլը, անցան ընդ
հոր և ընդ սուր, և մեր խորտակուած ու-
սերուն վրայ առած Աստուծոյ չնչարանը,
եւանք մեր պատմութեան գոլգոտիւն: Այժմ
ուշնչ ունինք, այրի ենք ու անժառանդ,
բայց գոհ ենք, զի երկնքի մարգարիտին,
մեր ողիբի գրիութեան համար տուինք այդ
ամէնք, ատով ապրեցնելու համար մեր ե-
կեղեցին և մեր Ազգը:

Իսկ աԳիւտ նշխարացը, տօնն է հայ ե-
րախտագիտութեան, հանգէպ այն մեծ հա-
յուն որ այնքան իմաստութեամբ և զոհո-
գութեամբ հրաշակերտեց մեր Եկեղեցին,
որուն կրմարկութեան տօնն է որ կը տօ-
նենք այսօր:

Երազի մը իրագործութն է այսօրուան

Քաղաք՝ խոսւած 8օն Կարողիկիմ՝ Ս. Յակոբայ
Տանակը մէջ:

տօնը. գուշք զիտէք պատմութիւնը այդ երազին, կուսաւորչի առաքելական ոգույն կոթողն է ան. տառապանքներէ, չարչարանքներէ, խորվիրապի արհաւիրքէն չը վախցող, և տարիներով գսեմ երազի մը, պայծառ տեսիլքի մը սեւուած զովին յաջողութեան կոթողը: Պատմութեան բալոր մեծ գործերը նախ երազներ, ծրագիրներ եղած են: Երազ մըն էր Սոլոմոնի գեղեցիկ տաճարը Փինչկեցի ճարտարապետի մտքին մէջ, երազ մը կամ ծըրագիր մըն էր Մովսէսի հոչակաւոր արձանը՝ Մ. Անձեւոյի երեակայութեան մէջ, երազ մըն էր այս գեղեցիկ տիեզերքը Աստուծոյ մտքին մէջ, և երազ մը եղաւ մեր անհման եկեղեցին կուսաւորչի մտքին մէջ, յըղացուած Հայաստանի աստղազարդ երկնքին ներք: Երազը Աստուծոյ խորհուրդին արտայայտութիւնն է, չողը հոգիի աւերակին, սառուղը մարդուն և երկնքին միշտ, մարդկային հոգիի անկառութեան քրայ շըջու հոգին, որ քառուն, անհութենէն կը նորասաելէ նոր աշխարհներ: Մարդը պատկերն է Աստուծոյ, այսինքն արգասիքը իր երազին. տեսիլը մարդուն յայտնութիւնն է Աստուծոյ, որով մարդ կը լինի մարգարէ և տեսանող, այսինքն իր հոգին կը յափ յաւիտենականին: Մեր ժողովուրդի գոյութեան և յարատեսութեան գաղտնիքը իր երազի ժողովուրդի մըլլալն է. ան կորսուած Կ'ըլլար ցարդ, եթէ չունենար գեղեցիկ տեսիլքը տեսական իրողութիւններու. այն որ գաղըինք երազելէ և յուսալէ, կը մեռնիք:

Երազող մըն էր Լուսաւորիչը, երազող մը Մ. Սահակ, և փառանեղ երազող մը եղաւ հայ վարդապետներու նախարարապը Մ. Մերոպայը, որու տեսիլքին մէջ թանձրացան իր իզնն ու հաւատաքը, և եղաւ հայ գիրերու այն հրաշալի իրողութիւնը, որուն չնորհւ Հայ ժողովուրդը և Հայ եկեղեցին Կ'ապրին ու կը չնչեն մինչեւ այսօր, իր արտայայտիչ աւետարանով քաղաքակիրթ կեանքի մը:

Մեր եկեղեցին տեսիլքի մը ծնունդ է: Սակայն չի բաւեր տեսիլքը. աստուծային իմաստութիւն պէտք է, տեսիլքով գոյաւորուածը անտեսելու, և իր նպատակին առաջնորդելու: Մարդկային ծանօթութիւնն ենքը փոփոխական են ու զաղփառվուն.

այսօրուան գիտութիւնը վազուան առաջ պէին է: Մարդկային իմաստութիւնը տեսական չէ, կատարեալ չէ, անիկա աւեպի վրայ շինուած առն կը նմանի որ չի գիմանար ժարդակային նոր մէջ, այլապէս աշխարհիկ իմաստութիւնները անհռւապէս կը բազմապատկուին, ու ի չգոյէ հաստատուն ստուգանիշը մը, զիրար կը հակասեն և կ'իյնան, զանզիկ մարդկային մաքը գերիշխանութիւնը միօրեայ է, երեկի իմաստունը վաղուան յիմարն է, Աստուծածային իմաստութիւնը, անվրէպ գիտութիւնն է աշխարհի. հանճարը անոր ստինքէն կ'ըմպէ, և տեսանողը անոր ճառագայթին կը յառի: Այդ երկնային իմաստութիւնն չնորհիւ էր որ ձկնորսներին առաքեալներ, և հովանեսինը մարգարէներ ելան, որուն կըրակովը սրբացան բոլոր հոգիները, և իմաստնացան խօսիւ չկիցողները: Մեր եկեղեցույ ճարտարապետ Լուսաւորիչն, և իր յաջորդութեան չպակեցաւ այդ իմաստութիւնը, որոնք երկնային ծորան քններէն ըմպեցին, և եղան մատենագիրներ, բանաստեղծներ, և երգիչներ Աստուծոյ փառքին, սուրբեր և մատուռակներ իր անտեսութեան, և Բանին կենաց քարոզողներ իր իմաստութեան:

Չի բաւեր սակայն միայն իմաստութիւնը, անոր պէտք է միանայ զոհողութիւնը, որպէսզի տեսիլքով յղացուած և իմաստութեամբ ճարտարապետուած տունը կամ հաստատութիւնը կարենայ դիմանայ Գեղեցիկ և նոյն տակ իմաստութիւնը է այն սպոռութիւնը որ տունի մը, կամ ձեռնարկի մը հիմարկէքին կենդանիներ կը մորթուին, և անոնց արինը կը թորուի չէնքի հիմերուն մէջ, իր խորհրդանիշ զոհողութեանը զի արինը գրաւականն է այդ գաղափարին: Մեր եկեղեցին չպակեցաւ այդ զոհողութիւնը, Լուսաւորիչ անոր պատին որմազիրը, իր բովանդակ կեանքը ընծայեց, և մեր եկեղեցին հիմերը կը կենան անոր սկզբներուն վրայ: Ամենէն առաջ Լուսաւորչի սերունդը որ այնքան պանծալի և ազգանուէր զէմքեր տուաւ, ինքինքը զոհեց Հայ եկեղեցին և Աղջին, լուսաւորելով և դաստիարակելով ժողովուրդը, և

առաջնորդելով զայն իր ճակատագրին, որ
թէև տխուր՝ բայց միշտ փրկարար եղաւ,
որ թէպէտ տառապագին՝ բայց միշտ վսեմ
հանդիսացաւ: Գոհողութեան ողին միշտ
արթուն և կենդանի եղած է մեր դարաւոր
կեանքին մէջ: Եթէ յաճախ մեզի պակսե-
ցաւ իմաստութիւնը, սակայն երբեք զոհու-
զութիւնը: Եւ արդէն ի՞նչ արժէք ունի
կեանքը, եթէ ան կոտրած ճրագի մը պէս
ամէն օր կը մարի և կը ծխայ ինքն իր հա-
մար միայն: Հայ Եկեղեցին դարերով այդ
դոկուլաթեան կեանքը ապեցաւ: Վկայ՝ իր
բիւրաւորնահատակներն ու սուրբերը, վկայ՝
իր դարաւոր արիւնոտ պատմութիւնը: Հայ
Եկեղեցւոյ պատերը իր զաւակներու արեան
շալախով ամրացած են, հայ հաւատագին
կանթեղը իր զաւակներու արցունքով միշտ
վառ մասցած է: Հայ Եկեղեցին ցեղին
խղճառանքն է, այն սրբարանը՝ ուր հայ
կեանքը ամենէն աւելի մարզուեցաւ գէպի
բարին և կատարեալը, այն գանձարանը՝ ուր
պահուեցան մեր հոգիին ու մտքին չնորհ-
ները. և մանաւանդ փրկութեան տապանը,
մեր պատմութեան արիւնոտ ժխանքներուն
դիմաց:

Երբեք մի՛ փոխէք զայն ուրիշ ո՛չ մէկ
արժէքի հետ. ան՝ որուն ճարտարապետը
եղաւ կուսաւորիչ, որուն լուսարարապետը
եղաւ Մեսրոպ, որուն ժիր մատուակը
հանդիսացաւ Սահակ: Օրուն ազօթող քուրմը
եղաւ Նարեկացին, որ իր հոգիին հետ Աս-
տուծոյ ճենճերեց բովանդակ ցեղի հոգին,
և որուն քաջցր երգիչը եղաւ Ծնորհալին:
Վստահ Եղէք որ եթէ քանդուի Եկեղեցին,
Ազգը չի կրնար ապրիլ:

Մի՛ նայիք այժմու իր խեղճութեան,
անիկա շատ դժուարութիւններու բախած
է, բայց չէ խորտակուած, անիկա շատ փո-
քորիկներ տեսած է, բայց միշտ արձակած
է իր լոյսը իրեն յառող հոգիններուն, ու
տարածած իր հոգանին, որ եթէ աշխարհիկ
զօրինեամբ զինուած բազուկ մը չէ եղած,
սակայն հոգեար միխթարութեան և հաւատ-
քին նեցուկ մը եղած է մարմնաւորապէս
խոշտանգուած և գերուած իր զաւակնե-
րուն համար: Այժմու իր անփառունակ և
սպաւոր վիճակին նայելով մի՛ խորհիք թէ
ան դադրած է այլևս իր բարերար ու բախ-
տորու գերը կատարելէ, և թէ մօտ է իր
անկումը, ինչպէս կը խոկան շատեր: Մի՛

նայիք այժմու իր ցնցոտիններուն, անիկա
երբեմն ծիրանազգեստ գծիսոյ մըն էր, որ
իր պատմունանին պատառներով պատեց իր
զաւակներուն վէրքերը, և որ փոխադար-
ձարար կը սպասէ անոնցմէ հաւատքի և
անձնութիւնթեան փոխարինութիւն մը: Սի-
րեցէք զայն, սրբուեցէք անով, և անոր
մեծութեան գանձերուն մէջ որոնցեցէք ձեր
հոգեկան կազդոյրը, պատրաստ ըլլալով
եթէ հարկ ըլլայ, պատուելու ձեր զգեստ-
ները և անոնց լաւագոյն կտորներովը վերըս-
արին հագուեցնելու և զարդարելու բովան-
դակ հայութեան այդ սպաւոր ու դժբախտ
Մայրը: Ինչ փոյթ թէ այժմ սուզին շղարշը
իշած է իր շուրջ, թէ փոթորիկ և արիւն
կը կոծեն իր պատերը. անոր հիմերը հա-
ւատքի կրակով են դրուած, և ապագայ
յոյսին հեռանկարովը ջահաւորուած: ճըշ-
մարտութիւնը մը կայ Աւետարանի այս խօս-
քին մէջ, թէ ողբունք գժոխուց մի՛ յաղ-
թահարեսցն զնաւա:

Եկեղեցին այսօր առաւել քան երբեք
պէտք ունի իր զաւակներու սիրոյն և ան-
վերապահ հաւատքին: Մեր զգացումներով
տաքցնենք այն սուրբ տաճարը որ մեր հո-
գիին սրբարանն ու կրթարանը եղաւ, որուն
մէջ հայուն Աստուածը, Լուսաւորչի Աս-
տուածը կը բնակի: Ենինենք այն սուրբ խո-
րանը ուր Միածինը իշած և զմեզ Աստու-
ծոյ որդեգրեց: Ենինենք այդ լուսույ խորանը
որուն առջև առաջին անգամ կուսաւորիչ
ծնրագրեց, և որուն վրայ հայ սերունդներ
աղօթեցին դարերով: «Եկայք Ենինեցուք»
... շինենք մեր փրկութեան նաև, և
պատրաստ ընենք զայն գալիք ջրկեղեղնե-
րու. այդ կերպով միայն կատարած պիտի
ըլլանք մեր պարտքը հանդէա կուսաւորիչն,
մեր Եկեղեցիին, և Աստուծոյ, որուն վա-
յելէ փասուք յաւիտեանս. ամէն:

Եղիշէ ՎԱՐԴԱՊԵՏ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԱՐԳԱՐԷՇԻՒԹԻՒՆ

Ա. — ԽԱԳՈՒՄ ԵՒ ԲՆՈՑԹ

Մարգարէական սպիրիտ մը ի յայտ եկած

էր երբայց մէջ, և գործունէութեան այնքան փառաւոր շրջան մը բոլորած էր՝ շուրջ 700 տարիներ, կարծես յուած էր այլանո՞ Տիրոջ ծննդով կանխող 3-4 դարերու ընթացքին: Հոգեւոր սովոր այդ գարերուն, սակայն, Խորայելացւոց կրօնական մինու լորտը լեցուած էր լարուած ակնկալութեան մը ելեք քրտականացումով: Ակնկալութեան համանակնորու լրման արշալոյսին, երբ ևսուժոյ չնորհները եղեղի պէս պիտի ողոդէնին մարդկութիւնը:

Երկնային էակի մը այցելութիւնը աննշան կոսի մը աւետես բացումը այդ նոր թուականին, Համեստ կոյսր հաղիւ լսած աստուածային այցելութեան աւետիքը՝ իր մէջ կը զգայ չնչելը նոր օդիի մը. պիտի լեցուած է անսովոր խանդով մը. պէտք կը զգայ պարպիլ զայն: Որո՞ւ սակայն: Միտքը կ'ինայ իր ազգական Եղիսաբէթը, անոր քոյ կը զգաէ, առ ոչինչ համարելով երկար ճամբրդութեան մը տաժանքը: Ու երբ իրարու կը հանդիպին, երկինքէն բախտաւորուած այս էակները, զիրար կ'ողջունեն այնպիսի զսեմ լեցուով մը, և կ'ընեն այնպիսի յայտնութիւններ որոնք վեր էին հասարակ մահանացուի մը կարողութենէն: — Մին' ու Եցուած Հոգուով Սրբով», մրսին «Տիրոջ մայր» ըլլալը կը մարգարէանայ: Մրսին սրբոյր ազգերէն իր երանուիը կը նախատեսէ: — Այս պայմաններուն մէջ ծննդով կ'առնէք քրիստոնէական մարգարէութիւնը, ներշնչեալ խօսքը, և առ տուածային խորհուրդներս քօզարածումը:

Ահա ուրիշ մը բերանը կզպուած Զաքարիան, ինք ևս ու Եցուած Հոգուով Սրբով կարծես վերստին կեանքի կը կոչէ Խորայէի էին մարգարէները. իր աղուն ապագան կը գուշակէ, և նոր զարաշրջանի մը արշալոյսը կ'աւետէ: Անդին՝ տաճարին մէջ, ալեզարդ ծերունի մը — Միմէոն — աստուածային մանուկ մը գրկին՝ կը խօսի այնպիսի լեզուով մը զոր մանկան ծնողքը չեն հասկնար: Ահա ուրիշ էին մը — զառամեալն չեննա — կը

մարգարէանայ և դԱստուած փառաբանելով Մեծ Մանկան ապագան կը պատմէ: — Մէջ տեղ երկու մանուկներ եւ անոնց չուրջը տարօրինակ լեզուներով եւ յայտնութիւններով ապագայի թանձր վարագոյրին քուգարձումը: Այս Մանուկներն ալ մարգարէի մը — աւելի քան Մարգարէի մը — գործունէութիւնը պիտի ունենային: Անոնցմէ մին Միւսէն պիտի որպակուէր և Առաւել քան զմարգարէ: Իսկ հնչքը պիտի հրոշակուէր ժողովուրդէն իրեւու և Այս Մարգարէ հզօր արդեամբք եւ բանիք պատշի Աստուածոյ եւ ամենայն ժողովրդեանց: — Աւրիկէ սակայն խօսելու եւ գործելու այս նոր եղանակը . . . — Առողմ ուր կամի չնէք, եւ զայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի զայ կամ յո՛ երթայ . . . :

Պենտեկոստէի գէպքը Երեխայրիքը եւ գործնական սկզբանւորութիւնը եղաւ ինչ որ նախատեսած եւ քարոզակ էին կերոյիշեալները: Լեզուները քակուեցան, սիրաւերը ընդարձակուեցան և մարգարէանալու շնորհը Հրգեհի մը պէս ծաւալեցաւ նորադարձներու մէջ: Նախնական Եկեղեցին մէջ կարծես կ'իրականանար Մովսէսի սա ըղձանքը. Յ՛ տայր զամենայն ժողովուրդոս Տետոն մարգարէս, յորժամ տայր Տէր զլիգին իւր ի վերայ նոցան (Թիւք ԺԱ. 29):

Այս գերբնական երեւոյթը բնական էր եւ անխուսափեհի՝ այն հանգաման քններու մէջ որոնց տակ կուգար ան մարգոց: Մարգիկ երբ քրիստոնեայ կ'ըլլային, իրենց մէջ կը զգային նոր կեանքը մը ըշջան ընելը, որուն երանական ազգեցութեան ներքեք կը խօսէն այնպիսի լեզուով մը, և կը յամոնէին այնպիսի խորունկ ճշմարտութիւններ, որոնք իրապէս նշաններն էին Աստուածային Ռիմի մը ներկայութեան Եկեղեցիէն ներս: Վասն զի նորազարձնելը խորապէս համոզուած էին թէ «Ճիրոջ օրը», որուն կը սպասէին Խորայէի բոլոր ընտրեալները, և զոր զուշակած էին Հին Աւստին մարգարէները, արգէն իսկ եկած հասած էր, և մարգիկ բուռն կերպով կը ցանկային գիտան թէ այս նոր Թուականը ի՞նչ կը նշանակէր իրենց եւ աշխարհի համար: — Այս էր Քրիստոնէական մարգարէութեան գետինը որուն վրայ տուաշին գործողները եղան նոյնինքն Առաքեալները:

Առաքեալներու հետ զուգընթաց լսելի եղան նաև ուրիշ ձայններ որոնք կը մեկնէին Աստուծոյ գործելու կերպերը և կը բացատրէին փրկութեան նոր Աւետիսը: Անոնցմէ ամենէն յայտնի գէմքերէն էին Ստեփանոս, որ թէն չէ յիշուած իրեւ մարգարէ, սակայն իր կեանքն ու գործը մարգարէի մը վայիլ կեանք ու գործունէութիւն էր: Իրեւն մարգարէ յանուանէ կը յիշուին Ազաբոս, որ գուշակց մեծ սով մը, և Պողոս Առաքեալի ձերբակալութիւնը. Բառնաբաս, նմանու օկոչեցեալն ներգէր», Պակիսո Կիւրենացի, Մանային գդայեկորդի Ճերովգի Զորրորդապետափառի և Սալլոս (Գործ Ժ. 1-3): Այս վերջնիները երեք պաշտամունք կը կատարէին պատգամ ստուցան Բառնաբասը և Ազզոսը ձեռնադրելու այն գործին որուն կանչուած էին անոնք Ա. Հոգիէն: Յուզա և Ծիլա ևս (Գործ Ժ. 32), որոնք Պողոսի և Բառնաբասի հետ Անախոք զդիւեցան երուսաղէմի ժողովին զնիւր հեթանոսութենէ եկած քրիստոնէից հաղորդելու համար, կը յիշուին իրեւ մարգարէներ. Ինչպէս նաև՝ Փիլիպոս Սարկաւագի շուրջ կոյս աղջիկները (Գործ Ժ. 9):

Մարգարէական չնորհը չէր սահմանափակուած զերոյիշեալ ծանօթ անձնաւորութեանց մէջ, այլ յանօրէն տարածուած էր քրիստոնէական համայնքներու մէջ: Հաւածանքը որ յաջորդեց Ստեֆանոս Սարկաւագի մահուան, ցրուեց աւետարանի հետերդները շրջակայ երկիրներ, և անոնք իրեւ ափոքը մի խմորը սկսան զանգուածաներ խմորել, և բազմացաւ թիւն անոնց որոնք կը ջանային մեկնել զգնշանս ժամանակաց, և կը խօսէին ուրպէս հոգին տայրը բարբառել նոցա: Այս կերպով ամէն համայնք ունեցաւ իր ամարգարէները: Անշուշտ անոնց մէջ գտնուեցան նաև սուստ մարգարէներ, սակայն ի սկզբան քիչ էր անոնց թիւը, եւ իսկական մարգարէներու հմայքը սոտուերի ներքեւ կը ճգէր զանոնք: Կարճ ժամանակի մէջ մարգարէները մեծ յարգ շահեցան հաւատացելոց առջև և կարգուեցան պի պէտս սրբոց, այսինքն կազմեցին նախական Եկեղեցին անտիրապետական մէկ կարգը, և իրենց աստիճանով առաքեալներէն անմիջապէս վերջը կուգային: Ճղոր եղ Աստուած յնկեղեցով այս են՝ նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս ...:

Նոր մարգարէութեան առաջին ներընեալ արտայայտութիւնը կ'երեւի Պետրոսի եւ Պողոսի քարոզներուն մէջ (Գործ Ժ. 14-36): Անոր դասական ահազդու յատկանիշը ի յայտ կուգայ Անանիայի եւ Սափիրայի պակուցիչ դատաստանին (Գործ Ե. 1-11), ու Սիմոն Մոզի (Գործ Լ. 18-21) եւ Եղիմաս Խմաստունի (Գործ Ժ. 8-12) հուժկու սաստումին մէջ: Խսկ իր նախարարութեան նկարագիրը երեան կուգայ Ագարոսի եւ այլոց կանխատեսութեանց մէջ (Գործ Ժ. 28, ինք. 10-11):

Ինչ որ բառեցաւ ցարդ անցողակի, և վերի վերոյ պատմութիւնն էր քրիստոնէական մարգարէութեան ծազման և ծաւաման, ի՞նչ էր սակայն ան իր իսկութեան մէջ:

Բայց նախ քան քրիստոնէական մարգարէութեան մասին խօսիլը, կ'արժէ ակնարկ մը նետել կին ազգաց և Հրէից մէջ ի կիրարկութեան եղած մարգարէութեանց վրայ:

Գրեթէ բոլոր հին ժողովուրդներու մէջ ընդհանուր ընդունելութիւնը գտած է սա պազափառը՝ թէ Աստուածութիւնը կրնայ սւզդակի յարաբերութեան մէջ մանել մարդկութեան հետ, և իր կամքը յայտնել անոնց: Կը տարբերէին միայն հասկացողութեան կերպին և անոր գործնական կիրարկութեան մէջ: Բայց հեթանոսական բրոնումին աստուածային զօրութիւնը կրնար անհատ մը իրեն ենթարկել և անոր հետ յարաբերութեան մէջ մանել և իր կամքը անոր յայտնել՝ ենթակային ինքինքնին եղած մէկ պահուն միայն, այսինքն օէ քսթազնի վիճակի մէջ:

Այսպէս՝ օրինակ՝ յունաց մէջ Պիթեան հարցուկը, ծելքեան տաճարի մէկ ճնշդքէն եղած գուրըշէն զգլիմելէն ետքը կը սկսէր իր պատգամները տալ: Որոշ մարդիկ կ'առնէին այս պատգամները, որոնք ընդհանրապէս շփոթ և անորոշ զառանցանքներ կամ հծծիւներ կ'ըլլային, և քիչ անգամ միայն յօդաւորեալ, բայց միշտ անկապակից խօսքեր, և հանգամանքներու պահանջըին հաւմեմատ կը մեկնէին: Այս մեկնիչները յունաց մէջ ծանօթ էին որոշներ անունով որ կը թարգմանուի ԱՄարգարէ:

Մարգարէութեան համար անհրաժեշտ նկատուած օէ քսթազնի այս վիճակը, թէն բոլորովին անծանօթ չէր ներայիցւոց մէջ, սակայն ասոնց լմբոնումը կիմովին կը տարբերէր հեթանոսականէն:

Նախ նպատակին մէջ մեծ էր տարրերութիւնը Երբայական մարդարէութեան և Հեթանոսականին միջն։ վասն զի վերջին ներուն նպատակն էր ամարդարէութեան միջոցա ապագայի մասին տեղեկութիւններ ստանալ առաջ բարյական կամ կրօնական հետապնդումի ։ անանկ որ զուտ չահաղիտական և աշխարհիկ նպատակն համար միայն կը գործէր հեթանոս մարդարէն ։ եթէ այս բառը՝ ներկայ հասկացողութեամբ՝ չտա չէ իրեն։ իսկ Երբայականին նպատակը համակ կրօնա-բարյական էր։ — Աստուածային կամքին ծանօթացում մարդոց, և բարյականի բարձրացում անոնց մէջ։

Ձեւով այ տարրեր էին ասոնք իրարմէ։ ինչպէս ակնարկեցինք, հեթանոս գուշակը կամ պատգամախօսը, բարորովին ինքնինքն ելած վրճակի մէջ կը խօսէր, իսկ հրեայ մարդարէն բոլորովին գիտակից վրճակին մէջ կուտար Աստուածոյ կամքին յայտնութիւնը։

Աւելի կը տարրերէին սակայն ասոնք իրարմէ իրենց պարունակութեամբ։ Ինչ պատգամներ կրնառ տալ զոր օրինակ խելացնոր հացուուկը իր զգիւան քին մէջ, կամ ի՞նչ մեկնութիւններ կրնային տալ անոնց՝ չահադէտ քուրմերը հեթանոս աշխարհին։ Երկդիմի խօսքից՝ առօրեայ կենաքին վերաբերեալ, իսկ Երբայական մարդարէութեանց մէջ ի յայտ կուգան կրօնական նշարտութեանց ամենախորունկ և ամենազօմ յայտնութիւններ զորս երբեք աշխարհ լսած ըլլար։ Անոնց մէջ վառ և առոյդ գոյներով կը նկարագրուի Աստուածոյ ապագայ թագւորութեան հեռանկարը Երբայեցի մարդարէնները եղան միջոցները որոնցմով Աստուած իր կամքը յայտնեց Խորայէլի ժողովուրդի կի կիմաց անոնց ամրոջ մարդկութեան ։ Երբայեցի մարդարէնները եղան նոյն ատեն, կը որ ախոյեանները աստուածատուր կրօնքին անարարտ անեց պահպանումին Մառացն անոնք այս բոլոր պատառական և անեղի պահպանարար տարրերուն և անուանակիչ ձեռքերուն դէմ որուն էմ կը սպառուի կրօնական մարդարէութիւնը մարդու կամքի մարդարէնները անեկին նաև այդ յայտնեալ մարդութիւնները սիրատեր ներս փոխանցելու աստուածատուր ձիրքը եւ կարողութիւնը, մարդոց նկարագիւններով։ այլ քրիստոնեայ մարդարէններ ունեկին նաև այդ յայտնեալ մարդութիւնները սիրատեր ներս փոխանցելու աստուածատուր ձիրքը եւ կարողութիւնը, մարդոց նկարագիւնները վերակերպելու ըստ աստուածային պատկերին, որ եղծուած էր մարդուն անկումով։ Տեսակ մը մարդկային կաւէն հոգեռու էակներ պատրաստոց վասեմ արձանագործներ էին ասոնք։

Քրիստոնեայ մարդարէնները ներշնչեալ քարոզիչներ էին, կը խօսէին իրեւ գործիքները Ս. Հոգիին ուսուցանելով, յորդիքներով, պրտապնդելով եւ միխթարելով։

Կրօնքին։ Այս և այլ վաեմ հանգամանքներով Երբայական մարդարէութիւնը անբաղդատելի է ո և է կրօնքի մէջ ի յայտ եկած համանման Երեսոյթին հետ։

Ի՞նչ էր սակայն բնոյթը քրիստոնէական մարդարէութեան։

Ան աւելի կատարելագործումը, բարգաւաճումը և ժողովրդական աւելի լայն խաւերու վրայ ծալարութեամբ էր Երբայականին։ Երկուքն ալ միեւնոյն աղբիւրէն կուգան, բայց տարրեր՝ իրենց որակով և տեսլականով։ Տեսակէտով մը՝ Երբայականը Երբեմն աւելի վաեմ է եւ զերազանց։ որովհետեւ յաճախ Աստուած հոն տիրական է իր ամբողջ հեղինակութեամբը և վեհութեամբը։ Մարդարէններէն ոմանք — մեծագոյնները — իրենք իսկ կը տառապին երբ անստուածոյ ձեռքը իրենց վրայ կ'ըլլար։ Անանուն և Եսայիշն իր յայտնութեանց և արտայայտութեանց մէջ այսպիսի վաեմ որուններու մէջ կը սաւառնի որ Մատթէի հրեշտակ կամ Յոհնաննու արծիւը միայն կիւնան զինքն գերազանցել։ Սակայն որիշ աեսակէտներով քրիստոնէականը աւելի բարձր է քան Երբայականը։ վասն զի ան — քրիստոնէականը — գործնակն է, եւ, դրական գետնի վրայ կը գործէ։ Ինչ որ իսրայէլի մարդարէնները նախատեսած և նկարագրած էին միայն, իրենք անոր իրագործման աշխատանքին լծուած են։ Վասն զի թէ քրիստոնէական մարդարէութիւնն ալ, Երբայականին նման, նպատակ ունեէր Աստուածոյ կամքին հասկացողութիւննը և հոգեկան նշարտութեանց թափանցումը, բայց իր գերը չըր լրանար զանոնք ժողովրդին յայտարարելով միայն, կամ մագալաթիւններու վրայ արձանացնելով։ այլ քրիստոնեայ մարդարէններ ունեկին նաև այդ յայտնեալ մարդութիւնները սիրատեր ներս փոխանցելու աստուածատուր ձիրքը եւ կարողութիւնը, մարդոց նկարագիւնները վերակերպելու ըստ աստուածային պատկերին, որ եղծուած էր մարդուն անկումով։ Տեսակ մը մարդկային կաւէն հոգեռու էակներ պատրաստուցուած վասեմ արձանագործներ էին ասոնք։

Քրիստոնեայ մարդարէնները ներշնչեալ քարոզիչներ էին, կը խօսէին իրեւ գործիքները Ս. Հոգիին ուսուցանելով, յորդիքներով, պրտապնդելով եւ միխթարելով։

Սակայն անոնցմէ ոմանք ալ նոր յայտնութեանների կ'ունենային և ապագան կը գուշակէին թաճախ մարդու գործութեանը առ կարգային։ Ասոնց խօսքին ալ յաճախ զուգութեաց էր այսպիսի հզօր ներշնչում մը որ երբեմն ենթական կը զգար ինքնինքը հոգեհմայլումի եւ յափշտակումի վիճակի մը մէջ։ այսուհանգեր ասոնք չէին կորսնցներ իրենց գիտակցութիւնը, և անձին հակաշուռումը, վասն զի ըստ Պօղոս Առաքեալի հաւաստումին՝ կրնային իրարու հնազանդիլ։ այսինքն երբ հաւաքոյթի մը մէջ մարգարէ մը խօսելու ատեն, յանկարծ ու րի մը նոր յայտնութիւն կը ստանար ու կ'ելէր զայն աւանդելու, անմիջապէս նաև խորդը պէտք էր լուեր։ Այս չէր սակայն պարագան ուկառաւիսութեանն ատեն։

Ի սկզբան մարգարէները առ հասարակ մայուն քարոզիներ էին, քրիստոնէական որոշ համայնքի մը մէջ։ սակայն Առաքելոց լուսաշող արեւներու հետզհետէ շիջումով այս նոր աստղերը սկսան ըշնել քրիստոնէական երկնակամարին վրայ։ Ասոնցմէ ոմանք ալ Առաքելոց նման ըշջուն քարոզիներ դարձան։

Մարգարէից պաշտօնը, լստ երևոյթին, սահմանափակուած էր միայն հաւատացելոց մէջ։ հեթանոսներու մէջ գործելու կամ աւետարանի լոյսը հեթանոսներու տանելու պաշտօնը, իրեւ հոգուոյն մէկ ա՛լ շնորհը Առաքեալներուն հետ զուգընթացարքը վերապահուած էր և կ'եւտարանիչ ներու։

Մարգարէութիւնը իրեն յատուկ յատահնիշերով կը զանազանուէր խօսիլու միւս երկու չնորյաներէն — վարդապետութենէն և լեզուախօսութենէն։ Աւաշինէն կը զանազանուէր ան իր ինքնարուղին և ներշնչեալ հանգամանքով, իր թարմութեամբը և ուժգոնութեամբը։ Իսկ լեզուախօսութենէն — վերոյիշեալ հանգամանքներով նոյն ըլլալով հանգերձ — իր հասկնալիութեամբը։ Իր գլխաւոր նպատակն էր, ինչպէս ակնարկեցինք, համոզել, սորվեցնել, խաղաղեցնել, մէկ խօսքով՝ օինել, հանգամանքներ՝ որոնք անհրաժեշտարար կը պահանջին որ այսպիսի չնորյ մը ըմբանելի ըլլայ ունկնդիրներուն։ Թէեւ յաճախ մարգարէից ներշնչեալ խօսքն ալ, լեզուախօսութեան պէս, իր մէջ կ'ունենար գերբնականի և անգենականի շռնչ մը, այսուհանգեր ըստ

ամենայնի հասկնալի էր ան, թէ՛ ըսողին և թէ՛ լոսղին համար Ու խօսելու ա՛յս կերպը ամենէն աւելի շինիչ է։ ներշնչեալ՝ բայց հասկնալի վերէն եկած՝ բայց մարդոց սկրտերուն դացող։

ԵՐԱՌԸՑՔ ՎԱՐԴԱՊԵՏ

(Հ-բան-ուիւշ)

Զ Ո Ւ Գ Ա Կ Ե Ւ Բ

ԼԵԶՈՒԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ

«Այ ու լեզուախօսութիւն կ'ընէ, մարդոց մէս չէ ու կը խօսի՞ այ Առուելոյ հետ, որպիսեւ ոչ ու կը հաւակնայ ինչ ու կ'ուտ, վասն զի ըստ Պօղոս Առաքեալի հաւատացուութիւնը, և անձին հակաշուռումը, վասն զի ըստ Պօղոս Առաքեալի հաւատացուութիւնը։ Այս կամ ու կը մարգարէանայ, մարդոց է ու կը խօսի և, իր խօսք ըինչ, միմիրայի և ափախարա արդիութիւն կատայ։ — Այ ու լեզուախօսութիւն կ'ընէ յանձ միայն կը ընէ, ինչ ու կը մարգարէանայ՝ ներկեցն իր ընէ։ — Կ'ուղեմ ու ամենին ալ լեզուախօսութիւն ընէ։ բայց աւելի կը փափարիմ ու մարգարէանաֆ։ — Ռովինեւ աւելի ընէն է մարգարէանափիւն խան լեզուախօսութիւնը։ Բայց եղարքնեւ, երէ զամ ձեզի լեզունեւ խօսելով, ինչ օգասկարին կը համար լեզու լեզուան ունենալ, երէ սակայն խօսի ձեզ յաշնարիւննենեալ, զիսուրեամբ, մարգարէութեամբ կամ ուսուցման՝ այն ատեն օգասկա կրնան ըլլայ։ Միայն լեզուախօսութեամ՝ սինի հնամին անկենան եռածուական գործինեւու ոռով անիման եռածեն իր հնամեն։ . . . Երէ աղօրին լեզուախօսութեամին նոյն միայն կ'արոք, այ միսն անպատճ կը մնայ։ Աւդ աւելի աղէկ չէ՞ ու աղօրմ թէ՛ նազիած եւ թէ՛ միանլ։ Առուելոյ փառաբանութիւն երես Առուելոյ, ինդի կեցած աղէկ հնապէս ու փառաբանութեամբ անկենան ակնեալ պահի ըստ։ Առաջ աղէկ պահի աղէկ չէ՞ ու դրան դրան զի հասկնար։ — Կնայ ըլլայ ու դրան աղէկ փառաբանութիւն կ'ընեն բայց ընկերու չի ընելու։ — Փառէ Առուելոյ, ձեւ ամենին աւելի յու լեզուախօսութիւն կրնան ընէն։ բայց կը հնալիքնեւ ներկեցնին մէջ հնամանի մինչ խօս ունենալու ամենայն մինչ խօս ունենալու մը կը ամեն լեզուախօսութեամ։ Մերմն է լեզուախօսութիւն ընէն, եւ յանկարծ ներս մէն զիտ մի հնաման անենքնեւ էն։ Իսկ երէ ամենին ալ մի առ մի մարգարէանա և ներս մէն անհանա մը կամ մը կը անու մը, կը յանիմանար ամենին եւ կը նենալու ու անու առաջ զարդինեներ եւելու կ'ելլեն եւ եւելու վրայի ինարալ կ'երկարց եւ կը խօսվածի քէ աղարքւ Առուելու ձեր մէջն է։»

(Ա. Կորնը. Ժ. 2-25)

ԹԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ

Ս Ա Մ Ա Ր Ո Ւ Հ Ի Ն

ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Յոգնած ու ծարաւ,
Ջըրհորին առջեւ
Յիսուս կանգ առաւ :
Կին մը աչքն իբեն , մեղմով կը հանէր
Դոյլը ջըրհորէն :
Զիթենիները արծաթ լրութեամբ կը շընէին խոր ,
Պան էր արեւի մեծ արիւնումին :
Երկինքն անկեզուկ զերթ մեծդի զանգակ ,
Կը տաղաւարէր բլուր ու ծորակ :
Հեռուն , շատ հեռուն ,
Երկինքը խածնող զոյգ սարակներու փէշերուն վըրայ ,
Հովիւն ու իր հօտ :
Ճաման՝ մնուած օծ կիյնար լերան շուրջ :
Աւելի անդին քննոտ կը խոկար Սիւգէմը փարթամ ,
Տըւած իր կըռնակ Գարիզին լերան :

Յոգնած ու ծարաւ ,
Ջըրհորին առջեւ
Յիսուս կանգ առաւ :
Իր դէմքին վըրայ , խոնցէնք ու փոշի ,
Եւ աչքերուն մէջ տակաւ հեռացող
Ու անհորիզոն խորունկ երկինքներ :
Կը նայի կընոջ ,
Եւ կը խոնդրէ զուր :
Զայնը Յիսուսին , լընին մէջ ինկող աստղի մը նըման
Փըշուր առ փըշուր կ'իշնէ անկէ ներս ,
Մընելով հազար ալիքներ լոյսի ,
Եւ զրանակներ , մըթին , անորոշ զգացումներու .
Կը սահի յուշիկ դոյլն անոր ծնոքէն :

Ջըրհորին եղերը մինակ են անոնք ,
Լըքուած դոյլին հետ :
— Դուն քանի՞ անգամ մարդոց սիրտն ի վար
Դոյլ արծակցիր , ո՛վ Սամարունի ,
Եւ ամէն անգամ զուրի փոխարէն
Գըտար ափ մը տիղմ :
Կինը ի գիտեր թէ լոյսն այդ ծայնին ,
Ինչո՞ւ մութերուն մէջ իր կը սուզի .
Ո՞վ է անսովոր ճամբորին այս յոգնած ,
Անսովոր ծայնով եւ աչւըներով ,
Ինչակս հարցուցած են կիներ բոլոր , ամէն անգամ որ

կապոյտ բոցին դէմ վազած է հոգին,
Անհուն պատրանքով :

Բայց բաղցը է Յիսուս,
Իր նայուածքին մէջ կը վարձատրուին,
Անդարձ, խորտակուած տարիներն բոլոր
Սամարտուհին .
Որուն սըրտին մէջ, Կ'երանայ յանկարձ
Երկինքներու չափ խոր ու անանուն
Կայլակը ոսկի, կայլակը կըրակ,
Երազն անաւարտ, բայց միշտ անյագուրդ,
Եւ միշտ վըրիպած, զգացումներէն ամենէն մեծին :
— Մարգարի մը գուն կը թըւիս ինծի,
Ո՞վ օտարական,
Եւ բու խօսքերուզ հայելին մէջ կը մեռնին դարեր,
Կ'ազրի ապագան .
Երկիրը երբեք չէր եղած մօտիկ
Երկնքին այսքան :

— Երկինքը մօտ է, երբ սիրտը մարդուն
Կարենայ լեցուիլ այս գոյլի նըման .
Մարդու ծնոթին մէջ դարերու շըղթան
Անդուկ կ'երկարի,
Բայց երկիրն աւաշդ, լիջնէր երկնքի անհուն շըրհորին .
Մարաւ են մարդիկ,
Մարաւ Աստուծոյ, երկնքին, սիրոյ :

— Բայց ի՞նչ է սէրը .
Որ օրորոցէն մինչեւ գերեզման
Վերջալոյսի պէս մեր մէջ կ'արիւնի :
— Ան զոհն է անհուն մարդուն, Աստուծոյ,
Եւ վախճան չունի .
Թելքրովն անոր մարդը կ'առընչուի իր նըմաններուն,
Եւ իր մատներու ներքեւ կը հիւսուին
Անտես առէջները ժամանակին .
Իրմով կը խօսին աստղերու,
Երկինքը՝ երկիրն .
Իր շողերուն մէջ կը բանան թերթեր,
Մաղիկն ու հոգին :
Իրեն կը յառին նայուածքը մանկան,
Աչքը կընոց .
Եւ իր անհունին վրայ կը նօնի
Զերթ ոսկի բուրվառ միրտը մայրերուն,
Ու իր ակսուզ կը հոսի Աստուեած
Երկինքէն երկիր :
Մէրը մարմնացեալ Աստուածն է մեր մէջ . . . ;

Պահը կ'ընթանար,
Կախուող շուքերու թեւերուն վրայ ,
Եւ կը հասուննար շըրջալայրին մէջ եւ հոգիներուն,

թան մը անծանօթ :
 Կինը տարուած էր .
 Մոռցած ժամանակ, եւ մոռցած իր դոյլ,
 Անյազ կ'ունկընդդէք :
 Իր հոգին մէջ կը ճարճատէին դղեակներ կաւէ,
 Երկինքները հին .
 Իսկ ինքը կարծես նոր շինուած տուն մ'էր
 Բացուած դարպասով :
 Լըռած էր Յիսուս,
 Յառած իր նայուածք լերան խնարհած արեւու գնդին .
 Յետոյ քաղցրօրին նայելով կընո՞՞
 Կ'առնէ հրաժեշտ .
 Իր դէմքին վրայ, կը շարժէր թեւը մութին ու լոյսին . . . :

Իրիկնամուտ էր ,
 Կը լայննար շուքը լեռներու կողքին .
 Կինը մոռցած էր, ժամանակն ու շուր,
 Անծանօթ մատներն իր հոգին մէջ
 Կը մնեցնէին կարծես անընդհան
 Դարերով լըռած հազար զանգակներ :
 Պերեկոյեան մէջ Յիսուս կը հալէր,
 Մահուան ընթացող ճառագայթի պէս :
 Կինը երազուն մօտեցաւ դոյլին,
 Եւ զայն հորին մէջ կախեց անտարբեր,
 Ա՞հ, ուշ էր արդէն,
 Արեւը հեռուն զերթ մորթուած թըռչուն
 Կը մեռնէր քիչ քիչ .
 Ամէն ինչ փոխուած կը թըւէր իր մէջ, կը թըւէր իր շուրջ :
 Հեռացող աղուոր այդ Գալիեացին,
 Իր ոսկի դոյլով ,
 Առած էր իրմէն ինչ որ ինք ունէր :

* * *

Երեք շաբաթ վերջ,
 Նոյն զըրհորին մօտ, իրիկնամուտին,
 Անցորդ մը գումժեց
 Սամարութին ,
 Թէ Սուրբ Քաղաքի մէջ, խալին վրայ,
 Մեռած էլ աղուոր ու երիտասարդ այն Գալիեացին :
 Կանեփը դոյլին մէկէն դարձաւ քար,
 Եւ մընաց կախուած շուրբերուն վերեւ .
 Դարձուց աչքերը,
 Կաթիլ մը արցունք, հեղուկ իր հոգին ,
 Մէկ հատիկ անկեղծ արցունքն այդ կընո՞՞ ,
 Յիսուսին համար կ'իյնար շուրբին ծոց :

ԵՂԻԿՈՐԴ

ԳՐԱԿԱՆՈՒՄ

ՎԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՅՐ ՍՈՒՐԲ...

* * *

Ես գրեմ՝ բառուն
Դուք զեք՝ յիսուն
Տարիներ վերջ, վերը պատմուած ննունդ
Դիշերն ու Անտառածինէն:

Հիմա

Մեր զեղին սկի ժամուն տեղ, տաղաւար է
վրա զանը ուսկի պէս դաշտրիկ, անուշիկ տա-
նարը Արբաց Ցակրեանց պարաւոր Գանձն։ Առ
անոր կամքներուն տակ միամիտ ցաւը, աւաւը
տափանպի իմ մանկութեան, պատմութեան՝ փո-
խարիստներ են ուրիշ բաներով։

«Մայր Սուրբ» Հայ ալ բարերս հրդեն, տակն
իմ աւշեղին, որուն պարիսպն զեր կը թնդան
հարուածին ներքեւ ճականացրին։

Երգ հնացէ մը դիրիզ գալար մը ամպ է իմ
աչքերուն համար Անհուն մէկ ալիք՝ որ կարէր
իմ աչքերը, ձգէր զիս առջին, զեպի հնաւաւը
արքաւութիւն մը։

Հազիր առժ առեն՝ սակայն, սկսող ալյալու-
մին առջև, ինքչինքո պահարան ննետելու հաե-
ւէս հրաւած ալօթքին սինուվը, որ ոչ զարի է ոչ
ալ զրկանք։ Զայն կը զգանի իրը հարմիր պազ-
տայ զեպի առնդիք մօն էին այնքն, ու այնքն հե-
ռու։ Ասոնց վրայ մատածում իսկ սարսաւէ հիմա
իմ թոյլ մարմինին։ «Մայր Սուրբ» նման է զու-
իին որ բացաւեցա իմ ալիս, ամիս կայ, եղե-
րական հանգէտի մը մէջ (զոր պատմեր եմ ուրիշ
տեղ մը) զէպի արշաւ մը, տարօրինակ նաւորդի
յը հետ, խեց խցին վրայ իմ մարմինին, ու
դրօշ մը առազաստ ցրած, անհուններ կորելով
իրարսէ արագ ։ ։ ։

* * *

Ու ահա, Հովհ է, կ'անցնի։

Պահարանը կը մօի անոր շունչին մէջ, իմ
շունչն ալ նեղուած։ Հինցած ամանէ մը թափուոց
դիմին նման ժամէն պահարան՝ անհուն է համ-
րան իմ անիրաւ ոտքերուն համար։ Զգայու-
թիւններու ալյալումը տակաւ կ'ամբանայ, ըլ-
լայսու համար սոտերյանութիւն։ Նորէն թեթէ,
առ քրինքը որ, ամիս սաւաշ, առանպին ա-
տեն մահուան ընկերոց շատրին էր ըստես։ Նոյն
կախարդ մատնիրուն տակ, ան ինցինքը կը հիւէւէ
բիւրեղ առ բիւրեղ ու կը փաթէէ զիս։ Պա՛յտ։ Ուր
կը զառնայ իմ մէջ ու ինձմէ զաւու։ Մալթէ զոյն
զոյն իր ալիքները կը թաւալէ։ Ու ասոնց ամէն
մէկ քուշան ձև կուտայ շըջանակին, — նկար,

կանթեղ, սաղաւարու։ Ու տեղը ուր նետեր եւ
ինքինքս, կը թօնի կակուզ, քիչիկ մը գողա-
ւոր, կարծես խոյս տալու պատրաստ իմ տակէն։

Այս ամէնը այնքան եղաւ որքան Մայր Սարբը
որ առանձին յոդթանակ է ինձի համար։

Նոր տաշնապ մը։

— Ո՞վ գիտէ։

Տեղ, օր, ժամանակ չունի Ան որուն զերա-
դոյն պարագն է յաննուած շնչել Տեղն ու ժա-
մանակը, զիրքերուն Միջոցն ու Տեղութիւնը։

Դիմուն մէջ ծղրիթին նուազը, յաւթեանի
մը համար յարցարաւուծ թզդինը՝ պրկուած լարին
որ կը տառապի ինքինքը խորտակեց լինաւուն։

